

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ  
ՎԱՆԱԶՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ



Ոստիկանության կողմից մարդու իրավունքների  
խախտման դեպքերի մասին  
տարեկան հաշվետվություն

(ԶԼՄ մշտադիտարկման արդյունքների ամփոփում)

2018թ. հունվար-դեկտեմբեր

ՆՈՐՎԵԳԻԱՅԻ ՀԵԼՍԻՆԿՅԱՆԿՈՄԻՏԵ



Norwegian  
Helsinki Committee

Վանաձոր 2019թ.

Հաշվետվությունը պատրաստվել է «Ոստիկանության հետ հարաբերություններում քաղաքացիների իրավունքների պաշտպանության արդյունավետության բարձրացում» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվում է Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի կողմից Նորվեգիայի հելսինկյան կոմիտեի ֆինանսական աջակցությամբ:

Զեկույցում հնչած կարծիքները ՀՔԱ Վանաձորի գրասենյակին են և հնարավոր է, որ չհամապատասխանեն ֆինանսավորող կազմակերպության տեսակետներին:

Կազմող՝ Սառա Ղազարյան

Խմբագիր՝ Արթուր Սաքունց

ՀՔԱ Վանաձորի գրասենյակ Հայաստան,

Վանաձոր 2001, Հեռ.՝ (+374 322) 4 22 68

Ֆաքս՝ (+374 322) 4 12 36

Էլ. փոստ՝ hcav@hcav.am

[www.hcav.am](http://www.hcav.am)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ..... 4

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ..... 6

2018 Թ.-ԻՆ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՍՄԱՆ ԴԵՊՔԵՐԻ ԱՍՓՈՓ ՏՎՅԱԼՆԵՐ7

*ԹՎԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ..... 9*

*2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՊԱՐԱԴՈՔՄՆԵՐԸ..... 13*

*Հունվար-մարտ..... 13*

*Ապրիլ..... 14*

*2018 Թ. ՄԱՅԻՍ-ԴԵԿՏԵՄԲԵՐ..... 18*

ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԻՑ ՀԵՏՈ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՀԱՆՐԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ..... 19

2018 Թ.-ԻՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՍՄԱՆԸ ՀԱՆԳԵՑՐԱԾ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ԴԵՊՔԵՐԻ ԱՍՓՈՓՈՒՄ..... 22

2018Թ.-ԻՆ ՀԱՎԱՔՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՍ ԴՐԱՆՑ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՍՄԱՆԸ ՀԱՆԳԵՑՐԱԾ ԴԵՊՔԵՐԻ ԱՍՓՈՓՈՒՄ..... 23

**ՀՀ օրենքը ՀՀ ոստիկանության կարգապահական կանոնագիրքը  
հաստատելու մասին**

*Հոդված 10. Ոստիկանության ծառայողի էթիկայի կանոնները*

*Ոստիկանության ծառայողի էթիկայի կանոնները ոստիկանության ծառայողի համար պարտադիր են ինչպես ծառայողական պարտականությունները կատարելու ընթացքում, այնպես էլ ծառայողական պարտականություններից դուրս:*

*Ոստիկանության ծառայողը պարտավոր է իմանալ և հարգել մարդու իրավունքներն ու ազատությունները, ցուցաբերել զսպվածություն, քաղաքակիրթ, վայելուչ և հարգալից վերաբերմունք քաղաքացիների*

## ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն տեղեկանքն ամփոփում է 2018 թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին ՀՀ-ում ոստիկանության աշխատակիցների կողմից մարդու իրավունքների խախտման դեպքերը:

Մարդու իրավունքների խախտման դեպքերը հավաքագրելու նպատակով մշտադիտարկվել է 15 առցանց լրատվամիջոց, ՀՀ ոստիկանության և Հատուկ Քննչական Ծառայության պաշտոնական կայքերը<sup>1</sup>:

Դեպքերն առանձնացվել և վերլուծվել են լրատվամիջոցների տարածած տեղեկատվության հիման վրա, որի հավաստիության համար պատասխանատվություն են կրում տարածող լրատվամիջոցները:

Արձանագրված դեպքերը բաժանվել են երկու պայմանական խմբի՝ անհատական բնույթի դեպքեր և հավաքների ժամանակ կամ դրանց մասնակցելու արդյունքում տեղի ունեցած դեպքեր: Հավաքների մեջ ներառվել են բոլոր հանրային միջոցառումները՝ ցույց, նստացույց, երթ և այլ հանրային միջոցառումներ:

Տեղեկանքում բացի ապօրինի բերման ենթարկելու դեպքերից անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքի խախտում են համարվել նաև այն բոլոր դեպքերը, երբ անձը բերման

<sup>1</sup> Մշտադիտարկված լրատվամիջոցներն են՝ [www.aravot.am](http://www.aravot.am), [www.armlur.am](http://www.armlur.am), [www.galstv.am](http://www.galstv.am), [www.azatutyun.am](http://www.azatutyun.am), [www.lin.am](http://www.lin.am), [www.168.am](http://www.168.am), [www.armtimes.am](http://www.armtimes.am), [www.hraparak.am](http://www.hraparak.am), [www.epress.am](http://www.epress.am), [www.lragir.am](http://www.lragir.am), [www.ilur.am](http://www.ilur.am), [www.news.am](http://www.news.am), [www.hetq.am](http://www.hetq.am), [www.alplus.am](http://www.alplus.am), [www.factor.am](http://www.factor.am), [www.police.am](http://www.police.am), [www.ccc.am](http://www.ccc.am)

Է ենթարկվել ոստիկանություն պայմանականորեն օրենքի տարրին համաձայն, սակայն պահվել է ոստիկանությունում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված 3 ժամից ավել ([հոդված 131<sup>1</sup>](#)), ինչպես նաև բերման ենթարկելու փորձերը, որոնք կանխվել են:

Ոստիկանության կողմից մարդու իրավունքների խախտումները ներկայացված են հետևյալ դասակարգմամբ.

2018 թ.-ին խախտված մարդու իրավունքները՝

1. Ազատ տեղաշարժվելու իրավունք
2. Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք
3. Անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք
4. Անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունք
5. Առողջության իրավունք
6. Արդար դատաքնության իրավունք
7. Արտահայտվելու ազատության իրավունք
8. Բնակության վայր ընտրելու իրավունք
9. Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք
10. Իրավաբանական օգնություն ստանալու իրավունք
11. Խաղաղ, առանց զենքի հավաք անցկացնելու իրավունք
12. Խտրականությունից զերծ մնալու իրավունք
13. Մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունք
14. Մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք
15. Մեփականության իրավունք
16. Տեղեկատվություն ստանալու իրավունք
17. Ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունք:

Այս բաժանումը կատարվել է՝ հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրությունը և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպայի կոնվենցիան, ինչպես նաև առանձին մասնագիտական խմբերի (գլխավորապես լրագրողների) կոնկրետ իրավունքները՝ խախտման բովանդակությունը հնարավորինս հստակ փոխանցելու և տեսանելի դարձնելու նպատակով:

Խախտված իրավունքների վերաբերյալ հաշվարկում ներառված են ինչպես առանձին իրավունքի խախտման դեպքերը, այնպես էլ այլ իրավունքների խախտման հետ զուգորդված դեպքերը:

Հաշվի առնելով հաշվետու տարվա ապրիլին տեղի ունեցած քաղաքացիական անհնազանդության զանգվածային միջոցառումները, դրանից հետո կամ դրա հետևանքով ստեղծված նոր իրավիճակը՝ տեղեկանքը կառուցել ենք հետևյալ տրամաբանությամբ՝ մինչև ապրիլյան հեղափոխություն, ապրիլյան հեղափոխություն և ապրիլյան հեղափոխությունից հետո՝ հնարավորինս ստույգ արտացոլելու հին և նոր իրողությունները:

## ՆԵՐԱՄՈՒԹՅՈՒՆ

Չորրորդ տարին անընդմեջ ոստիկանության կողմից մարդու իրավունքների խախտումների դեպքերի վերաբերյալ ՁԼՄ-ների մշտադիտարկումը հետաքրքիր զարգացումներ է բացահայտում: Եթե զուգահեռներ անցկացնենք 2015, 2016 և 2018 թվականների հանրային միջոցառումների և ոստիկանության կողմից մարդու իրավունքների խախտման միջադեպերի միջև, ապա կարող ենք եզրակացնել, որ, կարծես թե, դասեր են քաղում ու իրենց գործում հմտանում ինչպես զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչները, այնպես էլ ցուցարարներն ու ոստիկանության ծառայողները: Մասնավորապես լրատվամիջոցներն ավելի պատրաստված են, նյութերն ավելի ընդգրկուն, ցուցարարները՝ ավելի իրազեկ իրենց իրավունքներին, ոստիկաններն էլ, իրենց հերթին, ավելի հաճախ ու բացահայտ դիմում են քաղաքացիական հագուստով անձանց “ծառայությանը”, ինչպես կարելի է եզրահանգել, ի թիվս այլնի, ցույցերից հետո քրեական գործերի բովանդակություններից և ներգրավվող անձանցից: 2018 թվականին նրանք դիմել են անգամ առանց համարանիշի ավտոմեքենաների և հասարակական տրանսպորտի «աջակցությանը»: Փաստենք, սակայն, որ տեխնոլոգիաների զարգացմանը, իրադարձությունների լուսաբանման հնարավորությունների ընդլայնմանը զուգահեռ, ինչպես նաև լրագրողների աշխատանքի շնորհիվ՝ խիստ սահմանափակվում են ոստիկանության՝ իրենց ապօրինի գործողությունները քողարկելու հնարավորությունները:

# 2018 Թ.-ԻՆ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ԴԵՊՔԵՐԻ ԱՍՓՈՓ ՏՎՅԱԼՆԵՐ

2018 թվականի ապրիլյան իրադարձությունների լուսաբանումը կարելի է համարել ամենաընդգրկունը նախորդ տարիների համեմատ: Անգամ ապրիլի 17-ի ուշ երեկոյան Մաշտոց-Թումանյան խաչմերուկում տեղի ունեցած դեպքը, որի ընթացքում կասկածելի արտաքինով անձինք ցուցանակներ և լուսաֆորներ են ջարդել, օպերատիվորեն լուսաբանվել է Factor TV-ի աշխատակիցների կողմից, որոնք հասցրել էին նույն խաչմերուկում գտնվող իրենց գրասենյակից իջնել և հեռարձակել կատարվողն ուղիղ եթերով: Մա հնարավորություն սովեց կանխել միջադեպի վերաբերյալ կեղծ լուրերի տարածումը:

Մակայն գուգահեռաբար աճել է նաև լրագրողների աշխատանքի վտանգավորության աստիճանը: 2015 թվականին արձանագրվել է հավաքների ժամանակ լրագրողների աշխատանքի խոչընդոտման 17 դեպք, որոնք ուղեկցվել են նրանց նկատմամբ ֆիզիկական բռնություններով, հայհոյանքներով, բերման ենթարկումով, նկարահանող սարքերի խլամբ և վնասումով: [2015 թվականին միայն մեկ օրում՝ հունիսի 23-ին](#), էլեկտրաէներգիայի դեմ պայքարի ցույցը ցրելիս, բռնությամբ խոչընդոտվել է ՋԼՄ-ների շուրջ երկու տասնյակ աշխատակիցների աշխատանքը:

2016 թվականին արձանագրվել է [լրագրողների աշխատանքը բռնությամբ խոչընդոտելու](#) արդեն 30 դեպք, որից 24-ը (80%-ը) հուլիսի 17-ից 30-ն ընկած ժամանակահատվածում: 2016 թվականին նրանց դեմ կիրառվել են նաև հատուկ միջոցներ. մեկ օրում՝ հուլիսի 29-ին, ֆիզիկական բռնության են ենթարկվել և կիրառված պայթուցիկներից տուժել են թվով 16 լրագրողներ և օպերատորներ:

2018 թվականի ապրիլի 16-22-ը՝ այսինքն 7 օրվա ընթացքում, արձանագրվել է ոստիկանության ծառայողների կողմից լրագրողների աշխատանքը խոչընդոտելու 17 դեպք, որոնց ժամանակ միայն ոստիկանների կողմից բռնության է ենթարկվել 13 լրագրող: Ընդհանուր հաշվետու ժամանակաշրջանում լրագրողների աշխատանքը խոչընդոտելու 18 դեպք է գրանցվել:

Այս համատեքստում ուշագրավ են նաև լրագրողների՝ մասնագիտական օրինական գործունեությունը խոչընդոտելու համար պատասխանատվության ենթարկված անձանց վերաբերյալ տվյալները:

*2015 թ.-ի հունիսի 23-ին Բաղրամյան պողոտայում տեղի ունեցած դեպքերի կապակցությամբ մեկ տարի անց քրեական գործ հարուցվեց ոստիկանության 4 ծառայողի նկատմամբ: 2017 թվականի փետրվարի 20-ին ոստիկանության 3 ծառայող մեղավոր են ճանաչվում որպես պաշտոնատար անձ ([ՀՀ ՔՕ 164-րդ հոդվածի 2-րդ մաս](#)), իսկ 4-րդ պաշտոնյան, որը, ըստ իր ցուցմունքի, Բաղրամյան պողոտա էր գնացել ոչ թե ի պաշտոնե, այլ՝ որպես քաղաքացիական անձ, մեղավոր է ճանաչվում որպես քաղաքացիական անձ ([ՀՀ ՔՕ 164-րդ հոդվածի 1-ին մաս](#)):*

*Մարի թաղում 2016 թ.-ի հուլիսի 29-ին տեղի ունեցած դեպքերից հետո լրագրողների մասնագիտական օրինական գործունեությունը խոչընդոտելու փաստով բոլոր հարուցված գործերը բացառապես քաղաքացիական անձանց նկատմամբ էին: Քրեական գործեր էին հարուցվել և պատիժ սահմանվել 8*

*անձանց նկատմամբ: Ըստ այդմ, չնայած տուժող ճանաչված 41 լրագրողի՝ պատասխանատվության ենթարկվեցին ոստիկանության 3 ծառայող և 9 քաղաքացիական անձ:*

Փաստենք, որ նվազագույնը տարօրինակ է քաղաքացիական անձանց կողմից լրագրողների նկատմամբ բռնությունը, իսկ եթե հիշենք [2016 հուլիսին](#) թվականին ոստիկանների ուղեկցությամբ դեպի Սարի թաղ «շտապող» քաղաքացիական հագուստով անձանց և միաժամանակ 2018 թվականի ապրիլյան հեղափոխության օրերին ոստիկանության [հայտարարությունն](#) առ այն, որ **քաղաքացիական համազգեստներով գործողությունն իրականացնող անձինք ոստիկանության ծառայողներ են**, ապա ինչպես կարող ենք վստահ լինել, որ նախորդ տարիներին ևս ցուցարարների և լրագրողների նկատմամբ բռնություն կիրառող անձինք ոստիկանության ծառայողներ չեն եղել:

Եվս մեկ նկատառում, որը բացահայտեց մշտադիտարկումը և որը, հույս ունենք, հաշվի կառնեն ՁԼՄ ներկայացուցիչները: Ապրիլյան հեղափոխության աշխարհագրական ընդգրկվածությունը և մարզերում հանրային միջոցառումների լուսաբանումը ցույց տվեցին, որ, ցավոք, մարզերում նման միջոցառումները պատշաճ չեն լուսաբանվում, ինչը պայմանավորված է, ըստ ամենայնի, մարզերում ՁԼՄ խիստ սահմանափակ ներկայացվածությամբ և ռեսուրսների (մարդկային, տեխնիկական) սղությամբ, մինչդեռ ինչպես կարելի է եզրակացնել ապրիլյան հեղափոխության դեպքերից, տեսախցիկով լրագրողը կարող է նվազագույնն արձանագրել և վավերագրել խախտումը, իսկ առավելագույնը՝ կանխարգելիչ դեր ունենալ ոստիկանության ապօրինի գործողությունների համատեքստում:

Նույն նկատառումն արդիական է նաև անհատական դեպքերի համար: Անհատական դեպքերի վերլուծությունը ցույց է տալիս մասնավորապես ոստիկանության ստորաբաժանումներում քաղաքացիներին ֆիզիկական բռնության և հոգեբանական ճնշման ենթարկելու պրակտիկայի արմատավորումը: 2018 թվականին անհատական 26 դեպքերից **19-ում** (որից 6-ը՝ Երևանում, 13-ը՝ մարզերում) արձանագրվել է ֆիզիկական բռնության գործադրում ոստիկանության ծառայողների կողմից: Բազմաթիվ դեպքերում անձն անհիմն կանչվում է ոստիկանության բաժին, իր կամքին հակառակ պահվում բաժնում՝ փաստացի զրկվելով ազատությունից, երբ անհայտ է մնում, չի արձանագրվում անձի մուտքն ու ելքը ոստիկանության բաժիններ: Նման դեպքերը հնարավոր կլինի կանխել, կամ առնվազն կրճատել ոստիկանության բաժանմունքներում վերահսկողության մեխանիզմների սահմանման միջոցով: Ի դեպ, հիշեցնենք, որ դեռևս 2012 թվականից մեկնարկած ոստիկանության բաժիններում և վարչություններում տեսադիտման խցիկներ և տեսանկարահանող սարքեր տեղադրելու գործընթացը, կարծես թե, մոռացության է մատնվել: Մինչդեռ դա կարող էր լինել ոստիկանության գործունեության նկատմամբ վերահսկողության և ոստիկանների կողմից հնարավոր խախտումների կանխարգելման կարևոր երաշխիքներից մեկը:

ՁԼՄ-ներին կոչ ենք անում նաև հետևողական լինել մարդու իրավունքների խախտման դեպքերի վերաբերյալ հրապարակումներին: Օրինակ՝ [օգոստոսի 12-ին](#) Վանաձորի ոստիկանության ծառայողները բռնությամբ քաղաքացի են տեղափոխել բաժին և ցուցմունք կորզել: Մի քանի օրից հետո նրան բաց են թողնում, սակայն հետապնդումները չեն դադարում և ոստիկանները վերադարձնում են քաղաքացու անձնագիրը՝ ասելով որ նա պետք է լքի Հայաստանը ու այլևս չվերադառնա:




Նման բովանդակությամբ տեղեկությունների նկատմամբ հետևողականությունը մի կողմից, հավաստիություն կհաղորդի դեպքին, մյուս կողմից՝ կպարտադրի իրավապահ մարմիններին, մասնավորապես՝ ոստիկանությանը, հաշվետու լինել ինչպես իրենց կատարած աշխատանքի և/կամ ցուցաբերած անգործության համար, այնպես էլ հարուցել ծառայողական քննություններ ոստիկանության կողմից իրենց ծառայողական դիրքը չարաշահելու և/կամ ծառայողական պարտականությունները չկատարելու դեպքերով:

## ԹՎԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ

Պետք է փաստենք, որ 2018 թվականի ապրիլին ՀՀ ոստիկանությանը հաջողվեց երկու շաբաթվա ընթացքում ներկայանալ ՀՀ հանրությանն իր ամբողջ “հմայքով” և “գեղեցկությամբ”:

2018 թվականին արձանագրվել է ոստիկանության կողմից մարդու իրավունքների խախտման ընդհանուր 181 դեպք: Հատկանշական է, որ եթե 2018 թ.-ի **հունվար-մարտ** ամիսներին արձանագրվել է ՀՀ ոստիկանության կողմից մարդու իրավունքների խախտման 29 դեպք (11-ը՝ հանրային միջոցառումների ժամանակ, 18-ն եղել են անհատական բնույթի դեպքեր), ապա **ապրիլ** ամսին արձանագրվել է 119 դեպք (116-ը՝ հանրային միջոցառումների ժամանակ, 3-ը՝ անհատական բնույթի դեպքեր էին):

Գծապատկեր 1. Ոստիկանության աշխատակիցների կողմից մարդու իրավունքների խախտման թիվը 2018թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին



**Մայիս** ամսին արձանագրվել է 5 անհատական բնույթի դեպք և ոչ մի դեպք հանրային միջոցառումների ժամանակ և **հունիս** ամսին արձանագրվել է մեկ դեպք հանրային միջոցառումների ժամանակ, երբ քաշքշուկ տեղի ունեցավ ոստիկանների և ԱԱԾ-ի մոտ փողոցի երթևեկելի հատվածում ցույց անող Մանվել Գրիգորյանի աջակիցների միջև: **2018 թվականի երկրորդ կիսամյակում** (հուլիս-դեկտեմբեր) արձանագրվել է 15 դեպք (6 դեպք հանրային միջոցառումների ժամանակ և 9 դեպք՝ անհատական բնույթի), (Գծապատկեր 1):


Բացի գծապատկերում նշված դեպքերից, 12 անհատական բնույթի դեպքերում ՀՔԾ տարածած հաղորդագրության մեջ նշված չէր դեպքը տեղի ունենալու ամսաթիվը: Այդ դեպքերից 9-ը կայքում տեղադրվել են փետրվար-մարտ ամիսներին, իսկ 3-ը՝ մայիս ամսին:

Այսպիսով, 2018 թվականին արձանագրված՝ ոստիկանության ծառայողների կողմից և/կամ նրանց անգործության հետևանքով մարդու իրավունքների խախտման **181** դեպքերից 166-ը տեղի են ունեցել առաջին կիսամյակում, իսկ 15-ը՝ երկրորդ կիսամյակում: 166 դեպքերից 119-ն արձանագրվել է շատ կարճ ժամանակահատվածում՝ ապրիլի 11-25-ը, իսկ բերման ենթարկվածների թիվը կազմել է

1200 անձից ավելի, ինչն աննախադեպ է: Համեմատության համար նշենք, որ մինչև 2018 թվականի ապրիլ ամիսը բերման ենթարկվածների թվով առաջատարը 2016 թվական էր, երբ հուլիսի 17-ին՝ Սասնա Շռեռ խմբավորման կողմից ՊՊԾ գունդը գրավելու օրը մեկնարկած ցույցերի ժամանակ՝ մինչև հուլիսի 30-ը ՋԼՄ-ներով արձանագրվել էր ոստիկանության կողմից մարդու իրավունքների խախտման 84 դեպք, իսկ բերման էր ենթարկվել մոտ 700 անձ:

2018 թվականին խախտվել է 17 իրավունք (Գծապատկեր 2):


Գծապատկեր 2. 2018 թվականին խախտված իրավունքները



2015 թ.-ին արձանագրվել է մարդու իրավունքների խախտման **304 դեպք**, 2016թ.-ին՝ **338 դեպք**, 2017թ.-ին՝ **107 դեպք** (Գծապատկեր 3):

Գծապատկեր 3. Ոստիկանության աշխատակիցների կողմից մարդու իրավունքների խախտման ընդհանուր թիվը 2015թ., 2016թ., 2017թ., 2018թ.-ին

### Պեպքերի ընդհանուր թիվը




Ինչպես երևում է Գծապատկեր 3-ից, դեպքերի թիվն ավելացել է 74-ով 2017 թ.-ի համեմատությամբ:

Իրավունքների խախտմանը հանգեցրած դեպքերից 134-ը տեղի են ունեցել հավաքների ժամանակ կամ հավաքներին մասնակցելու հետևանքով: Այս ցուցանիշը 2017 թ.-ի ցուցանիշի համեմատ (37 դեպք) աճել է 97 դեպքով (72.4%-ով), 2016թ.-ի ցուցանիշի համեմատ (163 դեպք) նվազել է 29-ով (17.8%-ով), իսկ 2015 թ.-ի ցուցանիշի համեմատ (201 դեպք) նվազել է 67-ով (33.3%-ով) (Գծապատկեր 4):

Հաշվետու ժամանակահատվածում գրանցվել է մարդու իրավունքների խախտմանը հանգեցրած անհատական բնույթի 47 դեպք: 2017 թ.-ի նույն ցուցանիշի համեմատ (70 դեպք) դեպքերի թիվն նվազել է 23-ով (32.9%-ով), 2016թ.-ի նույն ցուցանիշի համեմատությամբ (168 դեպք) դեպքերի թիվը նվազել է 121-ով (72%-ով), իսկ 2015թ.-ի նույն ցուցանիշի համեմատությամբ (103 դեպք) դեպքերի թիվը նվազել է 56-ով (54.4%-ով) (Գծապատկեր 4):

Գծապատկեր 4. Ոստիկանության աշխատակիցների կողմից մարդու իրավունքների խախտման անհատական դեպքերի և հավաքների կամ հավաքներին մասնակցելու արդյունքում արձանագրված իրավունքների խախտման դեպքերի թիվը 2015թ., 2016թ., 2017թ., 2018թ.-ին



2018 թվականին առավել մեծ թվով խախտվել է Ֆիզիկական բնույթից գերծ մնալու իրավունքը՝ 84 դեպքում՝ կազմելով ընդհանուր խախտման դեպքերի 46.4%-ը: Արձանագրվել է ֆիզիկական բնույթից գերծ մնալու իրավունքի խախտման 33 անհատական բնույթի դեպք և 51 դեպք արձանագրվել է հավաքների ընթացքում:

*2017 թ.-ին ֆիզիկական բնույթից գերծ մնալու իրավունքը խախտվել էր 62 դեպքում՝ կազմելով ընդհանուր խախտման դեպքերի 49.1%-ը: 2016 թ.-ին ֆիզիկական բնույթից գերծ մնալու իրավունքը խախտվել էր 141 դեպքում, իսկ 2015 թ.-ին՝ 37 դեպքում:*

2018 թ.-ին հաջորդ առավել մեծ թվով խախտված իրավունքը խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունքն ուսումնասիրվող ժամանակահատվածում խախտվել է 81 դեպքում (դեպքերի 44.8%): Ընդորում, 73 դեպքն արձանագրվել է 2018 թվականի ապրիլի 7-25-ն ընկած ժամանակահատվածում:

*2017 թվականին այդ իրավունքը խախտվել էր 17 դեպքում, 2016 թվականին՝ 121 դեպքում, իսկ 2015 թվականին՝ 96 դեպքում:*

Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը խախտվել է 76 դեպքում (դեպքերի 42%):

*2017 թ.-ին գրանցվել է այդ իրավունքի խախտման 16 դեպք, որից 5-ը՝ հավաքների ընթացքում: 2016 թ.-ին անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը խախտվել էր 157 դեպքում, իսկ 2015 թ.-ին՝ 70 դեպքում:*

2018 թ.-ին մարդու իրավունքների խախտմանը հանգեցրած 181 դեպքերից 62-ի (կամ 34.3%) պարագայում խախտվել է 1 իրավունք, 88-ի (կամ 48.6%) պարագայում՝ միաժամանակ 2 իրավունք, 27 (կամ 14.9%) դեպքում՝ 3 իրավունք և 4 (2.2%) դեպքում՝ 4 իրավունք:

[2017 թ.-ին](#) մարդու իրավունքների խախտմանը հանգեցրած 107 դեպքերից 55-ի (կամ 51.4%) պարագայում խախտվել է 1 իրավունք, 42-ի (կամ 39.3%) պարագայում՝ միաժամանակ 2 իրավունք, 9 (կամ 8.4%) դեպքում՝ 3 իրավունք և մեկ դեպքում՝ 4 իրավունք:

[2016 թ.-ին](#) մարդու իրավունքների խախտմանը հանգեցրած 338 դեպքերից 132-ում (կամ 39.0%) խախտվել է 1 իրավունք, 109-ում (կամ 32.3%)՝ միաժամանակ 2 իրավունք, 74 (կամ 21.9%) դեպքում՝ 3 իրավունք, 13 (կամ 3.85%) դեպքում խախտվել է միաժամանակ 4, իսկ 9 դեպքում՝ միաժամանակ 5 իրավունք և մեկ դեպքում՝ միաժամանակ 6 իրավունք: Հատկանշական է, որ [2015 թ.-ին](#) ամբողջ ժամանակահատվածում մարդու իրավունքների խախտմանը հանգեցրած բոլոր դեպքերում միաժամանակ խախտվել է միայն 2 իրավունք (2015 թ.-ին արձանագրվել է 10 նման դեպք): Համեմատելով մեկից ավելի իրավունքների խախտման վերաբերյալ տվյալները՝ կարող ենք փաստել, որ աճել են 2 և ավելի իրավունքների միաժամանակյա խախտման դեպքերը:

Դեպքերի գերակշիռ մասը, ավանդաբար, գրանցվել է Երևանում (140 դեպք, ընդհանուր խախտումների 77.35%-ը): Սակայն, հարկ ենք համարում այս համատեքստում մեկ անգամ ևս նշել, որ ինչպես ցույց տվեց ապրիլյան հեղափոխության լուսաբանումը և ՀՀ մարզերից թե՛ զծին ստացվող ահազանգերը, ինչպես նաև, մյուս կողմից, Հատուկ քննչական ծառայության կայքէջում մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ հրապարակումները, մարզերում մարդու իրավունքների խախտումները թերի եմ լուսաբանվում:

## **2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՊԱՐԱԴՈՔՄՆԵՐԸ**

### ***Հունվար-մարտ***

Մշտադիտարկման արդյունքները ցույց են տալիս, որ հանրային միջոցառումներին ուստիկանության միջամտությունը շարունակում է ընտրողական լինել: Ուստիկանները, սակայն, հետևողական էին Նախագահի նստավայրի մոտ ցույց անողներին հեռացնելու հարցում: [Մարտի 23-ին](#) [Գյումրիում](#) սպանված Արտյոմ Ադալանյանի մայրը՝ Ռուզաննա Ադանյանը բողոքի ակցիա էր անցկացնում Նախագահական նստավայրի մոտ: Ուստիկանները չթույլատրեցին տիկին Ռուզաննայի ակցիան նախագահականի մոտ:

«Մասնա ծոերի» անդամներից հացադուլավոր Արմեն Բիլյանին պատշաճ պայմաններով քրեակատարողական հիմնարկ տեղափոխելու պահանջով բողոքի ցույց անող քաղաքացիները փակել էին Արշակունյաց պողոտայի երթևեկելի հատվածը, ուստիկանները, ուժ գործադրելով, նրանց փորձում էին [հեռացնել երթևեկելի հատվածից](#): Սակայն [մարտի 24-ին](#) Երևանում ցույց էին կազմակերպել ընդդեմ Սերժ Սարգսյանի վարչապետ դառնալու, ցույցի մասնակիցներն երթի ժամանակ որոշեցին փողոցում նստացույց սկսել, որի մասին նախօրոք չէր հայտարարվել. նրանք նստել էին գետնին, ոտքերով դոփում էին եւ վանկարկում՝ «Մերժիր Մերժին», «Մերժին ասում ենք՝ ոչ»: Նստացույցը հինգ րոպե տևեց: Մասնակիցները պարզաբանում էին՝ փողոց չենք փակել, նստել էինք հանգստանալու: Ակցիայի մասնակիցները Հանրապետության հրապարակի մոտակայքում մի քանի անգամ նաև ավոտմեքենաների ճանապարհը փակեցին: Ուստիկանները ոչ թե չեն բացել Ամիրյան փողոցը, երբ ցուցարարները նստել էին փողոցում և փակել երթևեկությունը, այլ առհասարակ չէին ուղեկցում ցուցարարներին, մինչդեռ ՀՀ օրենքով, ուստիկանությունը պարտավոր է ուղեկցել ցույցը՝ ապահովելով ակցիայի մասնակիցների անվտանգությունը և ցույցի անխափանությունը:

## Ապրիլ

- Մարտի 31-ին ԱԺ «Ելք» խմբակցության պատգամավոր, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վարչության անդամ Նիկոլ Փաշինյանը Գյումրիի Վարդանանց հրապարակից քայլարշավ է սկսում՝ ընդդեմ Սերժ Սարգսյանի կառավարման երրորդ ժամկետի: Ապրիլի 13-ին նա իր թիմակիցների հետ հասնում են Երևան և Ազատության հրապարակում հանրահավաք անցկացնելուց հետո երթով շարժվում դեպի Ֆրանսիայի հրապարակ և փակում հրապարակից դուրս եկող բոլոր չորս ուղղությունները, ինչի հետևանքով խափանվել էր տրանսպորտային միջոցների երթևեկությունը: Մինչև ապրիլի 15-ը ներառյալ, ոստիկանությունը որևէ գործողություններ չէր ձեռնարկում փողոցները բացելու, երթևեկությունը վերականգնելու ուղղությամբ: Նրանք որոշեցին ուժ կիրառել փողոցը փակողների նկատմամբ և վերականգնել երթևեկությունը միայն ապրիլի 16-ին:
- Ապրիլի 12-ին Սերժ Սարգսյանի՝ վարչապետի պաշտոնում առաջադրվելու դեմ ուղղված «Մերժիր Սերժին» նախաձեռնության անդամները նստացույց էին անում Մաշտոցի պողոտայում՝ փակելով փողոցի մի մասը: Ոստիկաններն ուժով նրանց հեռացրեցին և ծառայողական ավտոմեքենաներ նստեցրեցին ցուցարարներից Կարո Ղուկասյանին եւ Անուշ Լալայանին: **«Բերման չենք ենթարկում նրանց, այլ հեռացնում ենք անօրինական գործողության վայրից»,-լրագրողներին տեղեկացրեց Վալերի Օսիպյանը:**

Հարկ ենք համարում նշել, որ բերման ենթարկելու պրակտիկան կարելի է մեկնաբանել միայն որպես անձի՝ խաղաղ, առանց զենքի հավաքին մասնակցելը խոչընդոտելու միջոց, քանի որ, ըստ օրենքի, բերման ենթարկելիս պետք է ներկայացվեն այդ գործողության հիմքերը, և հարց է առաջանում՝ ինչ հիմքով է որոշվում, որ ծառայողական մեքենաներ մարդկանց իրենց կամքին հակառակ նստեցնելը բերման ենթարկելի չէ:

- Մի կողմից ոստիկանները քաղաքացիներին բերման էին ենթարկում ճանապարհները փակելու, երթևեկությունը խափանելու համար, մյուս կողմից՝ իրենք ոստիկանական ուժեր էին կենտրոնացնում, փշալարեր էին տեղադրում և փակում զրահատեխնիկայի միջոցով Բաղրամյան պողոտայի և հարակից փողոցների երթևեկությունը մեքենաների և հետիոտների համար:



Սղբյուրը՝ armlur.am



Աղբյուրը՝ [armkur.am](http://armkur.am)

Օրինակ՝ ապրիլի 12-ին Ճանապարհային ոստիկանությունը փակել էր Բաղրամյան պողոտան: Մերժ Մարգարյանի՝ վարչապետի պաշտոնում առաջադրվելու դեմ ուղղված «Մերժիր Մերժին» նախաձեռնության ավտոմեքենաները տեղում կանգնած էին և չէին կարողանում միանալ Երևան մտնող Նիկոլ Փաշինյանին: [Ոստիկանները պատճառաբանում էին](#), թե ավտոերթը խոչընդոտում է երթևեկությանը և խցանումներ առաջացնում: Այսինք, ավտոերթը խոչընդոտում է երթևեկությանը, խցանումներ է առաջացնում, իսկ քաղաքի կենտրոնական փողոցներից մեկի փակելը՝ ոչ:

- Ոստիկանությունը, մի դեպքում, առանց որևէ հիմքի, բերման է ենթարկում փողոցում կանգնած անձանց, մեկ այլ դեպքում, ոստիկանության ծառայողների աչքի առաջ [մահակներով և դիմակներով անձինք](#) են հարձակվում քաղաքացիների վրա, ոստիկանությունը, անհասկանալի պատճառներով, այդ փաստն այդ անձանց բերման ենթարկելու հիմք չի համարում:



- Մի կողմից ՀՀ քաղաքացիների նկատմամբ գործեր են հարուցվում ոստիկանության ծառայողների նկատմամբ [բռնություն կիրառելու համար](#), մյուս կողմից՝ կարմիր բերետավորները քաղաքացու ոտք են փորձում կոտրել, ոստիկանությունը հատուկ միջոցներ է կիրառում անզեն ցուցարարների նկատմամբ՝ վտանգելով նրանց առողջությունը:





Սղբյուրը՝ Kentron.am



- Մի կողմից ՀՀ քաղաքացիների նկատմամբ քրեական գործեր էին հարուցվում [զանգվածային անկարգություններ կազմակերպելու համար](#), մյուս կողմից՝ ոստիկանության ծառայողները և կարմիր բերետավորները [կոտորում էին](#), օրինակ, քաղաքացիների մեքենաների ապակիները:



Սղբյուրը՝ Panorama.am

- Ապրիլի 27-ին ոստիկանությունը [հայտարարություն է տարածում](#), որում մասնավորապես ասվում է, որ այդ օրը Ճանապարհային ոստիկանությունը մայրաքաղաքում հայտնաբերել և հատուկ պահպանվող տարածք են տեղափոխել 14 տրանսպորտային միջոցներ, որոնց վարորդները երթնելել են [առանց հաշվառման համարանիշերի](#), ոչ սթափ վիճակում կամ առանց անհրաժեշտ փաստաթղթերի: Ոստիկանության ծառայողների զգոնությունը ողջունելի է, սակայն հարկ ենք համարում հիշեցնել, որ նույն ոստիկանության ծառայողները հայտարարությունից օրեր առաջ քաղաքացիներին էին բերման ենթարկում [առանց պետհամարանիշի](#) տրանսպորտային միջոցներով, նույն ոստիկանության ծառայողներն էին [հասարակական տրանսպորտն օգտագործում](#) որպես ոստիկաններին տեղափոխելու, քաղաքացիներին բերման ենթարկելու միջոց: [Արձանագրվել է նաև դեպք](#), երբ ոստիկանները նախ ավտոբուսի տարեց վարորդից պահանջում էին տեղափոխել իր ավտոբուսով բերման ենթարկված քաղաքացիներին, իսկ այնուհետև վերցնում են բանալին և իրենք քշում ավտոբուսն առանց մեքենայի սեփականատիրոջ և/կամ այդ մեքենայի համար պատասխանատու անձի համաձայնության:





Աղբյուրը՝ *Hetq.am*

- 2018 թվականի ապրիլյան դեպքերն առանձնացան նաև ոստիկանության՝ քաղաքացիական անձանց ներգրավելու քաղաքականության պարադոքսներով:

Նախ, եղել են ոստիկանական համազգեստով, սակայն [առանց տարբերանշանների ոստիկաններ](#):



Աղբյուրը՝ *epress.am*

Մեկ այլ դեպքում, երբ Factor.am-ի լրագրողը, մոտենալով քաղաքացիական հագուստով անձանց հարցնում է. «Ներեցեք դուք ոստիկանության աշխատակից եք», հնչում է պատասխան. «Հարցազրույց չեմ տալիս, առանց մեկնաբանության»: «Որևէ տարբերանշան չկա Ձեզ վրա, որպեսզի քաղաքացին հասկանա, չէ՞ որ դա օրենքի խախտում է», - լրագրողի դիտարկումն անպատասխան է մնում: Ապա նույն հարցով լրագրողը դիմում է մոտակայքում շրջող Երևանի փոխոստիկանապետ Վալերի Օսիպյանին. «Եթե այդպիսիները կան, ուրեմն նրանց գործառույթներն օրենքով կարգավորվում են»:

Ավելին, 2018 թվականի դեպքերի ժամանակ ոստիկանությունը պաշտոնապես [հայտարարել է](#), որ «...քաղաքացիական համազգեստներով բերման ենթարկելու գործողություն իրականացնող անձինք ոստիկանության ծառայողներ են, որոնց գործողությունների համար ամբողջ պատասխանատվությունը կրում է ոստիկանությունը»:

Այս հայտարարությունը մի շարք հարցեր է առաջացնում, **նախ**, թե որ օրենքով են կարգավորվում հանրային ակցիաների ժամանակ ուստիկանության գործառույթներ իրականացնող քաղաքացիական հագուստով անձանց գործողությունները, **երկրորդը`** ո՞ր դեպքում է ուստիկանությունն իրավասու ներգավելու իր պատասխանատվության ներքո գործող քաղաքացիական հագուստով անձանց, արդյո՞ք քաղաքացիական անհնազանդության խաղաղ ցույցերն այդ դեպքն են, **երրորդը**, եթե իրենք ուստիկանության պատասխանատվության ներքո են, ապա ինչու՞ չեն կրում համապատասխան համազգեստ և/կամ տարբերանշան: **Ավելին**, ինչ հիմքով կարող ենք վստահ լինել, որ 2015 և 2016 թվականներին սադրող և մահակներով ցուցարարների վրա հարձակվող քաղաքացիական հագուստով անձանց գործառույթները նույնպես օրենքով չէին կարգավորվում, կամ որ նրանք ուստիկանության պատասխանատվության ներքո չէին գործում, և, **վերջապես**, եթե չի բացատրվում, որ քաղաքացիական հագուստով անձինք ուստիկանության պատասխանատվության ներքո են գործում, քաղաքացին ինչպես հասկանա, թե քաղաքացիական հագուստով որ անձն է ուստիկանության պատասխանատվության ներքո գործում, որը` ոչ:

- Ուստիկանները ապրիլյան իրադարձությունների ժամանակ աչքի են ընկել նաև ՀՀ քաղաքացիների հասցեին արհամարհարական արտահայտություններով:

*Օրինակ` ուստիկաններից մեկը լրագրողի հարցին, թե ինչ է կատարվում, պատասխանում է, “դուք տեսնում եք ինչ է կատարվում, [փողոցից ժողովրդին մաքրում ենք](#)” (տեսագրության 0:47 րոպեից):*

*[Մաշտոցի պողոտայից բերման ենթարկված Չառա Հարությունյանը](#) Ֆեյսբուքում գրել է, որ իրենց նստացրել են ուստիկանական մեքենայի հետևի խցում` «թե բա, ճաղերի համը զգացեք»: Հետևի մասի խուց մենակ ինձ են նստացրել: Ասում են` աղջիկը պետք ա իրա տեղը իմանա:*

- Ինչպես նաև արժանապատվությունը ստորացնող վերաբերմունքի, բռնության դեպքում անգործության դրսևորմամբ:

*Օրինակ` ապրիլի 16-ին տեղեկանալով, որ [Շիրակի մարզային ուստիկանության շենքի դիմաց](#) էվակուատորներ են բերել, ՁԼՄ ներկայացուցիչները մոտեցան տարածքին, նկարելով դրանք: Մի քանի հոգի, ամենայն հավանականությամբ` էվակուատորների վարորդները, հայիոյախառն արտահայտություններով հարձակվեցին լրագրողների ու օպերատորների վրա. «**Հըր հավքվաք ստեղից**», «**Լավ չի լինի վիճակներդ, եթե էս մեքենաներից նկար հայտնվավ**»: «**Շանթ**»հեռուստարնկերության օպերատորը կարգի հրավիրեց, ասելով, որ նման տոնով չի կարելի խոսել կանանց ներկայությամբ: Ի պատասխան նրանք **փորձեցին ձեռք բարձրացնել կին լրագրողներից մեկի վրա**, ինչը կանխեց օպերատորը: Ուստիկանները դիտում էին այս ամենը` չփորձելով միջամտել ու կարգի հրավիրել:*

## **2018 Թ. ՄԱՅԻՍ-ՂԵԿՏԵՄԲԵՐ**

Հաշվի առնելով, որ մայիսի 8-ից Հայաստանում նոր կառավարություն է ձևավորվել` սույն վերնագրի ներքո ներկայացնում ենք 2018 թվականի մայիս-դեկտեմբեր ամիսներին ուստիկանության կողմից մարդու իրավունքների խախտման դեպքերի:

Եվ այսպես` 2018 թվականի մայիս-դեկտեմբեր ամիսներին ՁԼՄ-ներով արձանագրվել է ուստիկանության կողմից մարդու իրավունքների խախտման 14 անհատական դեպք (12-ն եղել է

Ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունքի խախտման դեպք) և 7 դեպք հավաքների ընթացքում կամ դրանց մասնակցելու արդյունքում:

## ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՀԱՆՐԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ինչպես ցույց են տալիս մշտադիտարկման արդյունքները, նոր կառավարության ձևավորումից հետո ոստիկանության կողմից հանրային միջոցառումների խոչընդոտման և դրանց ընթացքում ֆիզիկական բռնության գործադրման դեպքերը նվազել են, սակայն պետք է փաստենք, որ պահպանվել է ընտրողական և անկանխատեսելի մոտեցումը, ինչպես նաև ավելացել են ոստիկանության անգործության դրսևորման դեպքերը



Աղբյուրը՝ aravot.am

[Օգոստոսի 9-ին](#) Ամուլսարի պահապանները փակել էին դեպի Ամուլսար տանող ճանապարհները՝ խոչընդոտելով Լիդիան Արմենիայի տեխնիկայի տեղաշարժը դեպի շինհրապարակ: Ոստիկանությունը թեև ներկա էր, սակայն որևէ գործողություն կամ միջամտություն չի իրականացրել:

[Նոյեմբերի 21-ին](#) ցուցարարները միակողմանի փակել են Ամիրյան փողոցը պահանջելով զինգրքույկներում նշվի, որ իրենք ապրիլյան պատերազմի մասնակից են: Ոստիկանները թեև գտնվում էին ցույցի վայրում, սակայն որևէ գործողություն չեն նախաձեռնել փողոցը բացելու ուղղությամբ:



Աղբյուրը՝ 168.am

Նույն փողոցը փակել էին նաև [օգոստոսի 27-28-ին](#) մի խումբ առևտրականներ, որոնց ոստիկանությունը տեղահանել էր իրենց գործունեության վայրերից: Նրանք ՀՀ կառավարության շենքի հետնամուտքի՝ դարպասներ մոտ հավաքվել և բողոքի ակցիա էին իրականացնում՝ հանդիպում պահանջելով ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ: Ոստիկանության աշխատակիցները՝ կարմիր բերետավորները տեղանքից հեռացնում էին բողոքի դուրս եկած զանգվածին:

Ուշադրության արժանի է ոստիկանության տեղեկատվական քաղաքականության փոփոխությունը: Հեղափոխությունից հետո ոստիկանությունը տեղեկություն է տարածում տեղի ունեցող հանրային միջոցառումների և ոստիկանության միջամտության մասին՝ շեշտը դնելով ոստիկանության կանխարգելիչ գործառույթի վրա: Ոստիկանության կողմի իր գործողությունների վերաբերյալ հանրությանն իրազեկելը միանշանակ ողջունելի է, սակայն դեռևս դժվար է որևէ գնահատական տալ, թե արդյոք դա հանրությանն իրականության մասին իրազեկելու քաղաքականություն է, թե «նախահարձակ» գործողություն՝ ցույց տալու, որ ոստիկանությունը հաշվետու է հանրությանը:

*Օրինակ՝ [դեկտեմբերի 15-ին](#) ոստիկանության տարածված հաղորդագրությունն առ այն, որ «Նոր Հայաստան, նոր հայրապետ» նախաձեռնության անդամները բողոքի ակցիա են կազմակերպել Էջմիածնում և ոստիկանությունը, մասնակիցների և կաթողիկոսի կողմնակիցների միջև բախման վտանգը կանխելու համար հրատապ միջոցառումներ է ձեռնարկել, արագորեն շղթա է կազմել, տարանջատել հակադիր կողմերին և կանխել բախումների իրական վտանգը: Միաժամանակ՝ ակցիայի մասնակից դպիր [Խաչատուր Եփրեմյանը լրագրողների հետ զրույցում պնդել է](#), որ եղել են ոստիկաններ, ովքեր բռնել են ակցիայի մասնակից երիտասարդների թևերից, որպեսզի կաթողիկոսի աջակիցները հարվածեն նրանց:*

*[Դեկտեմբերի 26-ին փաստաբան Սարգիս Խաչատրյանը](#) լրագրողներին ասել է, որ Ոստիկանության Մալաթիայի բաժնի ոստիկանները բռնություն են կիրառել 3 անչափահաս երեխաների մայր Ռուզաննա Պողոսյանի նկատմամբ: Նա ոստիկանների ոչ իրավաչափ գործողությունների հետևանքով մարմնական վնասվածքներ է ստացել:*

*[Ոստիկանությունը պարզաբանել է](#), որ Մալաթիայի բաժնի ծառայողները, առաջնորդվելով օրենքով սահմանված կարգով, ընկերության լիազոր ներկայացուցչի հետ այցելել են նշված բնակարան, որտեղ գտնվող կնոջը ներկայացրել են օրենքի պահանջները՝ բավարար ժամանակ տրամադրելով ներխուժումը դադարեցնելու համար: Ոստիկանության ծառայողները նաև պարզաբանել են, որ իրենց օրինական պահանջը չկատարելու դեպքում իրենք օրենքով լիազորված են կիրառել համաչափ ֆիզիկական ուժ: Քանի որ վերիջինս քայլեր չի ձեռնարկել իրեն ներկայացված օրինական պահանջները կատարելու, ուստի ոստիկանները դադարեցրել են ներխուժումը՝ նշված տարածքը հանձնելով ընկերության լիազոր ներկայացուցչին:*

Միջադեպերի, մասնավորապես անհատական դեպքերի վերաբերյալ ոստիկանությունից պարզաբանմամբ դիմելը և ստանալը բնորոշ չի եղել մինչհեղափոխական ժամանակներին: Սակայն պետք է նշենք, որ մասնավորապես անհատական դեպքերում ցանկալի և ողջունելի կլինեք ԶԼՄ ներկայացուցիչների հետևողականությունը, ինչը, մի կողմից, հնարավորություն կտա հետևելու դեպքի զարգացումներին և ունենալու ավելի ամբողջական պատկեր, մյուս կողմից՝ կպարտադրի ոստիկանությանը ավելի մեծ պատասխանատվությամբ մոտենալ հանրությանը հաշվետու լինելու իրենք պարտականությանը:



Այս համատեքստում հիշարժան է նաև Բարգավաճ Հայաստան Կուսակցության անդամ Մարկոս Հարությունյանի դեպքը: [Մեպտեմբերի 14-ին](#) նախընտրական քարոզարշավի շրջակում նա իր համախոհների հետ շարժվում էինք Աջափնյակ, երբ «...մեր մեքենան կանգնեցրին՝ մասկաներով, ունեին նաև ավտոմատներ, և բառիս բուն իմաստով փռեցին ասֆալտին: Ես, ձեռքերս պարզած, իջա մեքենայից, ներկայացա, որ ավագանու թեկնածու եմ, առանց որևէ բառ խոսելու՝ ինձ փռեցին ասֆալտին, նկարահանումները վերջացնելուց հետո ասեցին՝ կարող ես գնալ, ազատ ես: Հետո հրապարակեցին տեսանյութ ու ցույց տվեցին, որ իբր ես շրջում եմ թիկնագործով»՝ ասաց Մարկոս Հարությունյանը:

**Փաստենք, որ նկարահանման հրապարակելն արդարացված չէր, քանի որ չկար օրենով և միջազգային նորմերով սահմանված դրա անհրաժեշտությունը:**

**[ՀՀ Սահմանադրությունը](#)** (հոդված 31), ինչպես նաև **[Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան](#)** (հոդված 8) սահմանում են, որ «Մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով»: Այսինքն, ոստիկանության ծառայողները խախտել են անձի մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքը և ներկայացրել դա որպես ծառայողական պարտականությունների կատարում:

Անդրադառնալով ՀՀ ոստիկանապետերին՝ նշենք, որ 2018 թվականի առաջին կիսամյակում, չնայած երկրում տեղի ունեցած ապրիլյան հեղափոխությանը, աննկատ է մնացել ոստիկանապետ Վլադիմիր Գասպարյանը: Մշտադիտարկման արդյունքները, առհասարակ, ցույց են տալիս, որ ՀՀ ոստիկանապետ Վլադիմիր Գասպարյանը [2016 թ.-ի երկրորդ կիսամյակից](#) գրեթե չի երևացել հանրային միջոցառումների «բեմահարթակում»:

2016 թ.-ի երկրորդ կիսամյակում քաղաքացիների նկատմամբ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքով առանձնացել է ՀՀ փոխոստիկանապետ Լևոն Երանոսյանը, իսկ 2018 թ.-ի ապրիլյան հեղափոխության ժամանակ ոստիկանության գործողություններն ակտիվ ղեկավարում էր Երևան քաղաքի վարչության պետի տեղակալ Վալերիյ Օսիպյանը, որը հեղափոխությունից հետո նշանակվեց ՀՀ ոստիկանապետ:

Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ ոստիկանապետ Վալերիյ Օսիպյանը ՀՀ քաղաքացիների կողմից իրեն կամ իր գերատեսչությանը վերագրվող որոշ գործողություններ որակել է որպես «երևակայություն»:

*Մեպտեմբերի 22-ին քաղաքապետի թեկնածուներից [Նաիրա Զոհրաբյանը հայտարարել էր](#), որ այդ ահազանգերը սուտ մատնություն են, և Վալերիյ Օսիպյանին կոչ էր արել քրեական գործեր հարուցել սուտ մատնության հոդվածով: Ի պատասխան՝ ՀՀ ոստիկանապետն ասաց. «Դա Նաիրա Զոհրաբյանի երևակայությունն է, որ մենք չեն տիրապետում...»*

*Դեկտեմբերի 20-ին [յրագրողները ոստիկանապետ Վալերիյ Օսիպյանին հարցրին](#), թե ինչպես կմեկնաբանի ՊՊԾ գնդի գործով սպանված ոստիկան Յուրի Տեփանոսյանի հոր հայտարարությունները, թե իր որդուն հենց ոստիկաններն են սպանել: Ի պատասխան, ոստիկանապետն ասաց, որ դա նրա երևակայությունն է:*

Նշենք, որ գաղտնի է մնում նաև ոստիկանների թիվը՝ թեև դեռևս հունիսին ՀՀ ոստիկանապետ [Վալերի Ծախյանը հայտարարել էր](#), որ հանդես են գալու նախաձեռնությամբ, որ ոստիկանների թիվը գաղտնի չպահվի:

## 2018 Թ.-ԻՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՍՄԱՆԸ ՀԱՆԳԵՑՐԱԾ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ԴԵՊՔԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

2018թ.-ի հունվար-դեկտեմբեր ամիսներին արձանագրվել է ոստիկանության աշխատակիցների կողմից մարդու իրավունքների խախտմանը հանգեցրած 47 անհատական բնույթի դեպք: Հիմնականում խախտվել է ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունքը՝ 33 դեպքում (դեպքերի 70,2%), ինչպես առանձին, այնպես էլ գուգորդված այլ իրավունքների խախտումներով: Խախտվել են նաև անձնական ազատության և անձեռնմխելիության, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու, արդար դատաքնության, իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի, մտքի, խղճի և կրոնի ազատության, խտրականությունից զերծ մնալու, ազատ տեղաշարժվելու, բնակության վայր ընտրելու, առողջության պահպանման, անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքները: Մեկ դեպքում խոչընդոտվել է լրագրողի մասնագիտական օրինական գործունեությունը, երբ [հունվարի 19-ին](#) Երևանի քաղաքապետարանի լրատվական ծառայության ղեկավար Արթուր Գևորգյանը քաղաքապետարանի շենքում խոչընդոտել է լրագրողների աշխատանքը՝ նրանց ոստիկանների օգնությամբ դուրս հրավիրելով շենքից:

Անհատական բնույթի դեպքերից 20-ը տեղի են ունեցել քաղաք Երևանում, 24 դեպքը՝ մարզերում, որոնցից 6 դեպքը՝ Լոռու մարզում, 5 դեպքը՝ Կոտայքի մարզում, 4 դեպքը՝ Սյունիքի մարզում, 3-ական դեպք Արագածոտնի և Շիրակի մարզերում, մեկական դեպք տեղի է ունեցել Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի մարզերում: Այսինքն, դեպքերի կեսից ավելին՝ 51 %-ը, արձանագրվել է մարզերում:

*Հաշվետու ժամանակահատվածում գրանցված անհատական բնույթի դեպքերին՝ ըստ խախտված իրավունքի և ոստիկանության գործողության տեսակի (անգործության) առավել մանրամասն կարող էք ծանոթանալ [հետևյալ հղմամբ](#):*

**2018Թ.-ԻՆ ՀԱՎԱՔՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՍ ԴՐԱՆՑ  
ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ  
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՍՄԱՆԸ ՀԱՆԳԵՑՐԱԾ  
ԴԵՊՔԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ**

Հավաքների ընթացքում կամ դրանց մասնակցելու հետևանքով հաշվետու ժամանակահատվածում տեղի է ունեցել մարդու իրավունքների խախտմանը հանգեցրած 134 դեպք՝ 128 դեպք առաջին կիսամյակում, 6 դեպք՝ երկրորդ կիսամյակում: 90 դեպքում խախտվել է խաղաղ, առանց զենքի հավաք անցկացնելու իրավունքը (88 դեպքն արձանագրվել է առաջին կիսամյակում, 2 դեպք՝ երկրորդ կիսամյակում), 62 դեպքում՝ անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը (61 դեպքն արձանագրվել է առաջին կիսամյակում, 1 դեպք՝ երկրորդ կիսամյակում), 51 դեպքում՝ ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունքը (49 դեպքն արձանագրվել է առաջին կիսամյակում, 2 դեպք՝ երկրորդ կիսամյակում), ինչպես առանձին, այնպես էլ այլ իրավունքների հետ համակցված: Խախտվել են նաև ազատ տեղաշարժվելու, իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի, իրավաբանական օգնության, մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության, արտահայտվելու ազատության, անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու, առողջության, սեփականության, տեղեկատվություն ստանալու իրավունքները, ինչպես նաև խոչընդոտվել է լրագրողի՝ մասնագիտական օրինական գործունեությունը:

Հավաքների ընթացքում կամ դրանց մասնակցելու հետևանքով մարդու իրավունքների խախտման 117 դեպքը գրանցվել է Երևանում (113 դեպքն արձանագրվել է առաջին կիսամյակում, 4 դեպք՝ երկրորդ կիսամյակում), և 17 դեպք՝ մարզերում. 5 դեպք՝ Շիրակի մարզում, 3-ական դեպք՝ Լոռու, Արագածոտնի և Արարատի մարզերում, երկու դեպք՝ Արմավիրի մարզում: Շիրակի մարզում արձանագրված 5 դեպքերից մեկի դեպքում [Շիրակի մարզի Գեղանիստ, Մանթաշ, Փանիկ և Պեմգաշեն համայնքներում](#) Երևան գնալու համար հավաքված բազմության դեմ ԱԱԾ աշխատակիցներն ու ոստիկանները փակել էին ճանապարհն ու ահաբեկում էին մարդկանց՝ նկարելով նրանց դեմքերն ու սպառնալով, որ կպատժեն:

Մեկ դեպքը պայմանականորեն համարել ենք Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքը: Այն է, ապրիլի 16-18-ն ընկած ժամանակահատվածում [Մարդու իրավունքների պաշտպանին բողոքներ են հասցեագրվել](#) առ այն, որ առանց հիմքերի ոստիկանության ծառայողների կողմից տրանսպորտային միջոցներ են տեղափոխվել Ոստիկանության պահպանվող հատուկ տարածք:

Մեկ անգամ ևս նշենք, որ մարզերում հանրային միջոցառումների ժամանակ արձանագրված դեպքերի վերաբերյալ թվային տվյալները, հաշվի առնելով միայն ապրիլյան դեպքերի լայն աշխարհագրությունը, թույլ են տալիս եզրահանգելու, որ թվերը չեն արտացոլում

իրական պատքերը՝ այնտեղ կատարվող իրադարձությունների ոչ բավարար լուսաբանման պատճառով:

*Հաշվետու ժամանակահատվածում հավաքների ժամանակ գրանցված դեպքերին՝ ըստ խախտված իրավունքի և ոստիկանության գործողության տեսակի (անգործության) առավել մանրամասն կարող էք ծանոթանալ [հետևյալ հղմամբ](#):*